ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

2025Թ. 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

DONATE

zinapah.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- **ԶԻՆԱՊԱՀԻ կառավարումը և ֆինանսական վերլուծությունը**
  - Կառավարման մարմինը և գործադիր թիմը
  - Ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները
  - Գլխավոր գործադիր տնօրենի ուղերձը
  - Գործառնությունները 2017 – 2025թթ. 2 ԵՌ
  - Ծահառուները և վճարված հատուցումները 2025թ. 2 ԵՌ
  - Նվիրատվությունները 2017 – 2025թթ. 2 ԵՌ
  - Ծահառուներին միտված աջակցման ծրագրեր գործընկեր կազմակերպությունների հետ
  - Զարգացում և ֆինանսական անկախություն
- **2024թ. աուդիտորական հաշվետվություն**



Կառավարման մարմինը և գործադիր թիմը

Հոգաբարձուների խորհուրդ

Իրինա Սեյլանյան
Խորհրդի նախագահ

Ադամ Կաբլանյան
Խորհրդի անդամ

Ժոզեֆ Սիմոնյան
Խորհրդի անդամ

Անահիտ Ադամյան
Խորհրդի անդամ

Դավիթ Հակոբյան
Խորհրդի անդամ

Թիմ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Սահակյան
Ներքին աուդիտ

Գոհար Աբրահամյան
Գործառնական տնօրեն

Արմինե Վարդանյան
Ֆինանսական տնօրեն

Սմբատ Սահյան
Հատուցումների գծով տնօրեն

Նարինե Գալստյան
Հանրային կապերի և հաղորդակցության տնօրեն

Մարիանա Հարությունյան
Ծրագրերի ղեկավար

Հրաչիկ Ավթանդիլյան
Հատուցումների համակարգող

Արփինե Զարգարյան
Սոցիալական ծրագրերի համակարգող

Ֆելիքս Չիլինգարյան
Պորտֆելի կառավարիչ

Լիլիթ Ղաբուզյան
Հաշվետար

Վազգեն Մարտիրոսյան
SS ծրագրի մենեջեր

Մարի Բոյաջյան
Գնումների և դրոշմ. վճարների վերադարձի համակարգող

Նարե Ատոմյան
Ադմինիստրատիվ օգնական

Ռիմմա Հարությունյան
Ժամանակավոր ադմինիստրատիվ օգնական

ԶԻՆԱՊԱՀԻ ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները

ԶԻՆԱՊԱՀԸ ստեղծվել է 2017թ.՝ հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին, 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամություն ձեռք բերած կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով զինծառայողներին կայուն ֆինանսական հատուցումներ տրամադրելու նպատակով՝ հանուն ապագա սերունդների խաղաղության ու անվտանգության:

2023թ. ապրիլին հիմնադրամը, որը հայտնի էր **որպես Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ, վերանվանվեց ԶԻՆԱՊԱՀ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի:** Հիմնադրամը ապաքաղաքական կառույց է և գործում է համաձայն ՀՀ Օրենքի:

ԶԻՆԱՊԱՀԸ եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացի պարտադիր վճար է կատարում իր աշխատավարձից: ԶԻՆԱՊԱՀԸ համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

ԶԻՆԱՊԱՀԻ միջոցները գոյանում են՝

- **Հայաստանի հարկատուների կողմից վճարվող պարտադիր վճարներից (1,500-15,000 ՀՀ դրամ՝ կախված ամսական եկամուտից)**
- **Նվիրատվություններից, որոնք ստացվում են ողջ աշխարհից, այդ թվում՝ Հայաստանից**
- **ԶԻՆԱՊԱՀԻ ակտիվների կառավարումից ստացված եկամուտից**

ԶԻՆԱՊԱՀԻ կառավարման բարձրագույն մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է, որը կազմված է բարձր հեղինակություն վայելող փորձառու մասնագետներից՝ ֆինանսների և բանկային գործի, բիզնեսի, ճգնաժամային կառավարման, դրամահավաքի և ակտիվների կառավարման ոլորտներում:

ԶԻՆԱՊԱՀԻ գործառնական կառավարումը իրականացվում է բարձր մոտիվացիայով և փորձառու գործառնական թիմի կողմից:

ԶԻՆԱՊԱՀԻ կայքը արտացոլում է բոլոր ֆինանսական հոսքերը՝ նվիրատվությունները և պարտադիր վճարները, ինչպես նաև հրապարակում է շահառուների ցանկը և կատարված հատուցումները: ԶԻՆԱՊԱՀԻ կայքում հրապարակվում են նաև գլխավոր գործադիր տնօրենի եռամսյակային, տարեկան հաշվետվությունները և աշխարհի լավագույն 10 աուդիտորական ընկերություններից մեկի կողմից իրականացված Տարեկան աուդիտի հաշվետվությունը:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Համախմբել ազգին՝ կանգնելու զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին՝ ապահովելու նրանց ֆինանսական կայունությունը և արժանապատիվ կյանքը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լինել սոցիալապես պատասխանատու հիմնադրամ զինծառայողների համար, որն իր մեջ ներառում է պարտադիր և կամավոր ապահովագրական հատուցումները:

ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր պարտքն է կանգնել զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամ դարձած մեր զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին:

ՆԱԽԱԲԱՆ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

ԶԻՆԱՊԱՀ համայնքի հարգելի բարեկամներ,

Ամփոփելով 2025թ. երկրորդ եռամսյակը (ԵՌ2), ուրախությամբ տեղեկացնում եմ Ձեզ, որ մենք ֆինանսական և գործառնական առումով գրանցել ենք կայունություն և առաջընթաց:

Հիմնադրումից ի վեր՝ ԶԻՆԱՊԱՀԸ դարձել է կարևորագույն հաստատություն մեր զինծառայողների և նրանց ընտանիքների համար: ԵՌ2-ի տվյալներով մենք աջակցել ենք 5,497 զինծառայողների, և ընդհանուր հատուցումները գերազանցել են 116.8 միլիարդ ՀՀ դրամը: Մենք ունենք ֆինանսական ամուր հիմք. շուրջ 208 միլիարդ ՀՀ դրամ գոյացել է պարտադիր վճարումներից, 31 միլիարդ ՀՀ դրամ՝ ակտիվների կառավարումից, և շուրջ 9.6 միլիարդ ՀՀ դրամ՝ նվիրատվություններից («Կամուրջ» ծրագիրը ներառված չէ): Այս թվերը միայն ֆինանսական աջակցություն մասին չեն. դրանք խորհրդանշում են արժանապատվություն, ճանաչում և հայ ժողովրդի՝ իր հերոսներին տված խոստման իրականացում:

Անցյալ տարի ԶԻՆԱՊԱՀԻ Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ 26%-ով բարձրացվեցին մեր շահառուներին տրամադրվող ամսական հատուցման գումարները՝ նպատակ ունենալով մեղմել գնաճի արդյունքում առաջացած ֆինանսական բեռը և ցույց տալ մեր անսասան նվիրումը մեր շահառուներին՝ երաշխավորելով նրանց արժանապատիվ կյանքը: ԵՌ2-ում մենք շարունակում ենք վճարել ինդեքսավորված հատուցումները: Յուրաքանչյուր թվի հետևում ընտանիք է, պատմություն և ապագա, և մենք նրանց կողքին ենք:

Այդ ոգեշնչմամբ և մեծ հպարտությամբ ԶԻՆԱՊԱՀԻ կայքում թողարկել ենք «Հիշում ենք...» նախագիծը՝ նվիրված կյանքը զոհաբերած հերոսների հիշատակին: Այս առցանց հուշամատյանը հանրությանը հնարավորություն է տալիս ծանոթանալ մեր հերոսների պատմություններին և փոխանցել դրանք գալիք սերունդներին: Սա ազգային հիշողության, հավաքական երախտագիտության և լուռ հարգանքի տուրքի մատուցմանն ուղղված նախաձեռնություն է:

Նայելով ապագային՝ մեր կարևորագույն նախաձեռնություններից մեկը ZINHUB հարթակի վերաթողարկումն է՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության e-work հարթակի հետ համատեղ, որը միավորելու է գործընկեր կազմակերպություններին՝ ներկայացնելով աշխատանքի տեղավորման, կրթության, վերաինտեգրման և սոցիալական աջակցման այլ ծառայություններ՝ մեր շահառուների համար: Մենք նաև նախաձեռնել ենք զինհաշմանդամություն ունեցող զինծառայողների աջակցման միջոցների տրամադրման ծրագիրը: Սա նոր դարաշրջանի մեկնարկ է ԶԻՆԱՊԱՀԻ համար, որտեղ մեր շահառուների հզորացումն ու վերաինտեգրումը դառնում են մեր երկարաժամկետ ռազմավարության հիմնասյուները:
ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է զարգանալ: Այդ ճանապարհին մեր արժեքները մնում են անփոփոխ՝ թափանցիկություն, հաշվետվողականություն և բարեվարքություն: Այս սկզբունքներով ենք առաջնորդվում որոշումները կայացնելիս և նույնիսկ մեկ դրամ ծախսելիս:
Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացու և նվիրատուի, ովքեր իրականություն են դարձնում մեր առաքելությունը, ինչպես նաև ՀՀ Կառավարությանը, մեր գործընկեր կազմակերպություններին, ԶԻՆԱՊԱՀԻ թիմին իրենց ջանքերի և նվիրված աշխատանքի համար: Միասին մենք տրամադրում ենք ոչ միայն աջակցություն, այլ նաև ձևավորում ենք տոկուն, ներառական և երախտապարտ Հայաստան և սփյուռք:

Մեզ միավորում է նպատակը, վճռականությունը և անսասան նվիրումը այն մարդկանց, ովքեր այդքան թանկ են վճարել մեր հայրենիքի համար:

Խորին հարգանքով և գնահատանքով՝
Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀ հիմնադրամ

ՁԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2025թթ.
Սահող Գնահատականով (ՍԳ)

ՁԻՆԱՊԱՀԻ 2025թ. ԵՌ2-ի հաշվետվությունը ամփոփում է հիմնադրամի ֆինանսական արդյունքներն ու միտումները՝ համադրված նախորդ տարիների փաստացի տվյալների և կանխատեսումների հետ:

ՁԻՆԱՊԱՀԻ ֆինանսական վիճակը շարունակում է մնալ կայուն: Եկամուտների աճը պայմանավորված է հիմնականում պարտադիր վճարների և ակտիվների կառավարումից ստացվող եկամտի հոսքերով: Նվիրատվությունները, այդ թվում՝ «Կամուրջ»-ի նվիրատվությունները, շարունակում են նվազել, իսկ ծախսերը խիստ վերահսկվում են: Ծախսերի զգալի մասը կազմում են հատուցումները: Ակտիվների կառավարումը որպես եկամտի աղբյուր ձեռք է բերել ռազմավարական նշանակություն: Ներկայումս դիտարկվում է այն ձևավորել որպես առանձին ներդրումային պորտֆել՝ կառավարման նպատակով:

Կանխատեսվում է, որ ընդհանուր եկամուտը կայուն աճ է գրանցելու 2025թ.՝ հասնելով 59,729 մլն ՀՀ դրամի, ինչը 2024թ. համեմատ շուրջ 9% աճ է կազմում: 2025թ. ևս հիմնական եկամտի աղբյուրը պարտադիր վճարումներն են: Նվիրատվությունները կտրուկ նվազել են՝ 2021թ. 1,290 մլն ՀՀ դրամից 2025թ.-ին իջնելով 169 մլն ՀՀ դրամի: Ակտիվների կառավարումից ստացվող եկամուտը զգալի աճել է՝ 2021թ. 1,841 մլն ՀՀ դրամից հասնելով 9,339 մլն ՀՀ դրամի՝ 2024թ., իսկ 2025թ. կանխատեսմամբ կկազմի 12,048 մլն ՀՀ դրամ: Ըստ կանխատեսման՝ 2025թ. եկամուտները կձևավորվեն պարտադիր վճարումներից (79%) և ակտիվների կառավարումից (20%): Կայուն աճող եկամուտների և վերահսկվող ծախսերի համատեքստում զուտ եկամուտը կշարունակի աճել 2025թ., եթե միտումը պահպանվի:

Միևնույն ժամանակ ՁԻՆԱՊԱՀԻ ընդհանուր ծախսերը, որոնք իրենց առավելագույն շեմին են հասել 2021թ. կազմելով 44,633 մլն ՀՀ դրամ, 2025թ. կանխատեսվում են 20,890 մլն ՀՀ դրամի սահմաններում, ինչը 2024թ. նկատմամբ մոտ 4% նվազում է: Չնայած փոփոխություններին՝ ծախսերը վերահսկվում են և պահվում համամասնորեն եկամուտների աճի նկատմամբ:

Կանխատեսվում է, որ վարչական ծախսերի և նախորդ տարվա ակտիվների հարաբերակցությունը կկազմի 0.3%՝ մնալով 2% առավելագույնի շեմի և բյուջեյով կանխատեսված 0.32%-ի սահմաններում:

ՄԼՆ ԴՐԱՄ	2017-2020***	2021	2022	2023	2024	2025 ՍԳ	2017-2025 ՍԳ	2025 ՍԳ 2024-ի համեմատ	% հարաբ 2024	% հարաբ 2025
Եկամուտ պարտադիր վճարներից	30,914	29,072	35,274	43,199	45,393	47,451	231,304	5%	83%	79%
Նվիրատվություններ	7,280	1,290	508	273	171	169	9,692	-1%	0.31%	0.28%
Կամուրջ նվիրատվություն*	1,000	1,510	239	237	86	61	3,133	-29%	0.16%	0.10%
ՀՀԿԲ**	-	301	-	-	-	-	301	NA	NA	NA
Ակտիվների կառավարում	4,970	1,841	3,256	5,944	9,339	12,048	37,398	29%	17%	20%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	0.24	0.19	0.26	0.29	0,25	1.22	-14%	0.001%	0.001%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**44,164**	**34,015**	**39,278**	**49,654**	**54,990**	**59,729**	**281,829**	**9%**	**100%**	**100%**
Հատուցումներ	9,664	44,484	16,878	14,747	21,489	20,501	127,762	-5%	98%	98%
Վարչական ծախսեր	-	-	246	267	316	341	1,171	8%	1%	2%
Գործառնական ծախսեր	0	149	21	25	39	48	278	41%	0%	0%
Այլ	-	-	-	-	-	-	-	NA	NA	NA
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**9,665**	**44,633**	**17,146**	**15,039**	**21,838**	**20,890**	**129,211**	**-4%**	**100%**	**100%**

***Կամուրջ** – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ՁԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 55 ամսվա ընթացքում՝ ամսական 300,000 ՀՀ դրամի չափով իրավասու շահառուներին և ներկայացվում են փոխհատուցման ծախսերում:

**** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում** – ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

***** Ներառում է 2008-2016թթ. դեպքերի մասով հատուցումները**

ԶԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2025թթ. 2-ՐԴ ԵՌ

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-2025թթ. ԵՌ 2-ի սահող գնահատականով եկամուտը և ծախսերը արտացոլված են գրաֆիկում՝ ըստ տարիների:

2025թ. նախորդ տարվա համեմատ ակնկալվում է ընդհանուր եկամտի 9% աճ՝ կազմելով 59,729 մլն ՀՀ դրամ: Ընդհանուր ծախսերը 2024թ. համեմատությամբ կնվազեն 4%-ով՝ կազմելով 20,890 մլն ՀՀ դրամ:

2017-2025թթ. ընդհանուր եկամուտն աճել է շուրջ 10 անգամ՝ ~6.2 մլրդ ՀՀ դրամից հասնելով ~59.7 մլրդ ՀՀ դրամի: Ամենամեծ աճը գրանցվել է 2020-2021թթ.՝ պայմանավորված դրոշմանիշային վճարների բարձրացման օրենսդրական փոփոխությամբ, ազգային համախմբմամբ, նվիրատվությունների և ակտիվների կառավարումից ձևավորված եկամտի աճով:

Ծախսերը ցածր են եղել մինչև 2020թ. և կտրուկ աճ են գրանցել 2021թ. նույնիսկ գերազանցելով եկամուտը (~10.6B ՀՀ դրամ), որը սակայն հաղթահարվեց պարտադիր դրոշմանիշային վճարների դրույքաչափերի բարձրացմամբ: 2021թ. հետո ծախսերը կայունացել են՝ կազմելով 15-20 մլրդ ՀՀ դրամ:

Կանխատեսվում է, որ 2025թ. ԶԻՆԱՊԱՀԸ կգրանցի պատմության ընթացքում ամենաբարձր զուտ եկամուտը՝ շուրջ 39 մլրդ ՀՀ դրամ:

ԶԻՆԱՊԱՀԻ 2017–25թթ. եկամուտը ծախսերի համեմատ, 2-րդ ԵՌ դրությամբ, մլն ՀՀ դրամ



ԶԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2025ԹԹ. 2-ՐԴ ԵՌ

2025թ. ԶԻՆԱՊԱՀԸ մեկնարկել է ամուր ֆինանսական հիմքով՝ արտացոլելով ֆինանսական արդյունավետ կառավարում և պարտադիր դրոշմանիշային վճարների կայուն մուտքեր: 2025թ. 2-րդ ԵՌ դրությամբ ընդհանուր եկամուտը կազմում է 15.120 մլրդ ՀՀ դրամ՝ գրանցելով 3.9 մլրդ ՀՀ դրամ (35%) 2024թ. 2-րդ ԵՌ համեմատությամբ: Գնահատվում է, որ 2025թ. եկամուտը կկազմի 59.729 մլրդ ՀՀ դրամ, որը 2024թ. համեմատ աճել է 9%-ով:

Ընդհանուր եկամտի զգալի մաս կազմող պարտադիր դրոշմանիշային վճարներից ձևավորված եկամուտը գրանցել է 35% աճ նախորդ տարվա համեմատ՝ կազմելով 12.081 մլրդ ՀՀ դրամ: Այս փաստը խորհրդանշում է զինծառայողների և նրանց ընտանիքների հանդեպ ՀՀ աշխատող քաղաքացիների շարունակական աջակցությունը: **Պարտադիր դրոշմանիշային վճարները կազմել են ընդհանուր եկամուտների ամենամեծ մասնաբաժինը՝ շուրջ 80%:**

Ակտիվների կառավարումից ձևավորվող եկամուտը 37% աճ է գրանցել՝ կազմելով **2.986 մլրդ ՀՀ դրամ** 2024թ. ԵՌ 2-ի 2.02 մլրդ ՀՀ դրամի համեմատ: Կանխատեսվող 29% տարեկան աճը ազդարարում է ակտիվների արդյունավետ կառավարման մասին:

Միաժամանակ, ակնկալվում է, որ նվիրատվությունները (բացառությամբ Կամուրջի) կայուն կլինեն: 2025թ. 2-րդ ԵՌ-ում աճել են 44%-ով և կազմել 39 միլիոն դրամ: Չնայած նվիրատվություններն ընդհանուր եկամտի ընդամենը 0.26% են կազմում, մենք կարևորում ենք այդ նվիրատվությունները և ընդունում որպես հանրության աջակցության և մասնակցության կարևորագույն դրսևորում:

Ինչ վերաբերում է ծախսերին, ընդհանուր ծախսերը նվազել են -11%-ով 2025թ. 2-րդ ԵՌ-ում և կազմում են 4.9 մլրդ ՀՀ դրամ: Այս անկումը պայմանավորված է հատուցման գումարների -11% նվազմամբ, որը կազմում է 4.77 մլրդ ՀՀ դրամ ԵՌ 2-ում:

Եկամուտների աճի և վերահսկվող ծախսերի ներքո ԶԻՆԱՊԱՀԸ պահպանում է ամուր և կայուն ֆինանսական դիրք՝ ապահովելով մեր շահառուներին տրամադրվող ֆինանսական հատուցումները և կարողանալով արձագանքել առաջացող կարիքներին:

ՄԼՆ, ԴՐԱՄ	ԵՌ 1 2025	Q2 2025	2024 ԵՌ 1-4	2025 ԵՌ 1-4 ՍԳ	2025 ՍԳ ՀԱՄԵՄԱՏ 2024	ԵՌ2'25 ՀԱՄԵՄԱՏ ԵՌ2'24	% հարաբ ԵՌ2'24	% հարաբ ԵՌ2'25
Եկամուտ պարտադիր վճարներից	12,679	12,081	45,393	47,451	5%	35%	80%	80%
Նվիրատվություններ	34	39	171	169	-1%	44%	0,24%	0,26%
Կամուրջ նվիրատվություն*	7	13	86	61	-29%	-12%	0,13%	0,09%
ՀՀԿԲ**	-	-	-	-	NA	NA	0%	0%
Ակտիվների կառավարում	2,848	2,986	9,339	12,048	29%	37%	19%	20%
Այլ եկամուտներ տուգանքներից	0,09	0,30	0.29	0.25	-14%	NA	0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**15,569**	**15,120**	**54,990**	**59,729**	**9%**	**35%**	**100%**	**100%**
Հատուցումներ	4,819	4,768	21,489	20,501	-5%	-11%	98%	98%
Կապ. ծախսեր	76	84	316	341	8%	1%	2%	2%
Գործառնական ծախսեր	9	12	34	48	41%	3%	0.2%	0,2%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**4,903**	**4,864**	**21,838**	**20,890**	**-4%**	**-11%**	**100%**	**100%**

***Կամուրջ** – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 55 ամսվա ընթացքում՝ ամսական 300,000 ՀՀ դրամի չափով իրավասու շահառուներին և ներկայացվում են փոխհատուցման ծախսերում:

**** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում** – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

2025թ. ՍԳ համեմատությունը 2017-2025թթ. ՍԳ ամփոփ պատկերով 2-րդ ԵՌ

2017-2025 ՍԳ

- **Պարտադիր վճարների 21% կստացվի** 2025թ.՝ գրանցելով 5% աճ 2024թ. համեմատ:
- **Նվիրատվությունները փոքրիկ մաս են կազմում՝ ընդամենը** 2%՝ ի հակադրություն նախորդ տարիների և հատկապես 2020թ., քանի որ դրամահավաքին ուղղված նախաձեռնություններ չեն իրականացվում:
- **Ակտիվների կառավարման եկամտի 32%-ը կստացվի** 2025թ. ըստ ՍԳ-ի: Անկայուն նվիրատվությունների պարագայում ակտիվների կառավարումից ստացված եկամուտը հանդիսանում է ամուր ռազմավարական հիմք և ապահովում կայուն հոսքեր:
- **Հատուցումների 16%-ը** կվճարվեն 2025թ.՝ մնալով կայուն:

Ակտիվների կառավարումից և պարտադիր դրոշմանիշային վճարներից ձևավորված եկամուտը կազմում է ընդհանուր եկամտի 99.7%-ը՝ ապահովելով ԶԻՆԱՊԱՀԻ ֆինանսական միջոցների ձևավորվումը տարբեր ուղիներով նույնիսկ նվիրատվությունների նվազման պարագայում:

ՄԼՆ ՀՀ դրամ	2024	2025 ՍԳ	2017-2025 ՍԳ	% հարաբ. 2025 ՍԳ
Պարտադիր վճարներ	45,393	47,451	231,304	21%
Նվիրատվություններ	171	169	9,692	2%
Ակտիվների կառավարում	9,339	12,048	37,398	32%
Հատուցումներ	21,489	20,501	127,762	16%

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2025թ. 2-րդ ԵՌ

- **2017-2025թթ. ԵՌ 2-ում** ԶԻՆԱՊԱՀԸ հատուցում է տրամադրել **5,497** շահառուների:

- 2025թ. ԵՌ 2-ում հատուցվել են **6 նոր դեպքեր՝ 2024թ. նույն ժամանակահատվածի 89 դեպքերի փոխարեն, որոնք դարձել են ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներ Արցախի 2023թ. սեպտեմբերի էսկալացիայի արդյունքում:**

2025թ. 2-րդ ԵՌ 6 նոր դեպքերի բաշխվածությունը ստորև՝ ըստ շահառուների դասակարգման:

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	1-ին խումբ	2-րդ խումբ
2	1	0	3

2017-2025 2-րդ ԵՌ 5,497 ընդհանուր հատուցումների բաշխվածությունը ստորև ըստ շահառուների դասակարգման:

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	1-ին խումբ	2-րդ խումբ
4,557	252	151	537

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-2025ԹԹ. 2-ՐԴ ԵՌ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ՝ 5,497 ԴԵՊՔԵՐՈՎ



ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները վճարված հատուցումները 2017-2025թթ. 2-րդ ԵՌ

2017-2025թթ. 2-րդ ԵՌ կտրվածքով **5,497 դեպքերով հատուցումները** ստորև բաշխված են ըստ շահառուների դասակարգման:

43%-ը ժամկետային շարքայիններ են, մինչդեռ **19%** զորահավաքային շարքայիններ, սպաներ, **30%** պայմանագրային շարքայիններ և **8%** կամավորներ:

2017-2025ԹԹ. 2-ՐԴ ԵՌ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԿՈՉՄԱՆ, 5,497 ԴԵՊՔՈՎ





2017-2025ԹԹ. 2-ՐԴ ԵՌ. ԿՏՐՎԱԾՔՈՎ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ

6

ՆՈՐ հատուցման դեպքեր 2025թ. 2-րդ ԵՌ և 5,497 դեպքեր 2017-2025թթ. 2-րդ ԵՌ

4.8մլրդ ՀՀ դրամի

հատուցումներ 2025թ. 2-րդ ԵՌ

116.8մլրդ ՀՀ դրամի

2-րդ ԵՌ դրությամբ՝ զոհվածներին, անհայտ բացակայողներին և հաշմանդամության ապահովագրության իրավունք ունեցողներին

5%

պարտադիր վճարների աճ 2025թ. 2-րդ ԵՌ՝ 2024թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ

ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները 2017-2025թթ 2-րդ ԵՌ դրությամբ

2017-2025թթ. 2-րդ ԵՌ դրությամբ ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները (առանց Կամուրջ ծրագրի) կազմում են շուրջ 9.6 մլրդ ՀՀ դրամ: 2017թ. ի վեր նվիրատվությունների քանակը կազմում է 95,000, իսկ միջին նվիրատվության գումարը՝ 89,000 ՀՀ դրամ: Ամենաշատ նվիրատվությունները կատարվել են պատերազմական էսկալացիաների ժամանակ: Նվիրատվությունները նվազել են ավելի քան 90%-ով 2020թ. պատերազմին գրանցած առավելագույն շեմից: Ներկայումս նվիրատվությունները կայունացել են: 2025թ. կանխատեսմամբ՝ նվիրատվությունները կկազմեն շուրջ 170 մլն ՀՀ դրամ՝ ձևավորելով նոր սահմանաչափ:

2025թ. 2-րդ ԵՌ նվիրատվությունների գումարը համեմատած 2024թ. նույն ժամանակահատվածի հետ աճել են 44%-ով: Նվիրատվությունների քանակը նվազել է -6%-ով: 2020թ. հետո սկսված նվազման միտումը շարունակվում է նաև 2025թ.: Համաձայն 2025թ. կանխատեսման՝ նվիրատվությունները կպահպանեն նույն սահմանափաչը նախորդ տարվա համեմատ: Նվիրատվությունների քանակը կնվազի 2,800-ի՝ 2024թ. 4,167-ի համեմատ: Նվիրատվությունները անկում են գրանցել 2021թ. ի վեր, սակայն կանխատեսվում է, որ կկայունանան 2025թ.: Դա բացատրվում է հետպատերազմյան նվազումով, քանի որ պատերազմի ժամանակ նվիրատվությունները սովորաբար կտրուկ աճում են, ինչն արտահայտվել է 2020թ. արդյունքներում: Նվիրատվությունների ամենամեծ անկումը գրանցվել է ռուբլիով արված նվիրատվություններում՝ պայմանավորված Ռուսաստանի դեմ իրականացվող սանկցիաներով և միջազգային փոխանցումների սահմանափակումներով: Նվիրատվությունները կատարվել են բանկային փոխանցումներով, ինչպես նաև **www.zinapah.am** կայքի միջոցով:

2017-2025թթ. ՍԳ նվիրատվությունները դրամով և քանակով



ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները 2017-2025թթ 2-րդ ԵՌ դրությամբ

2017-2025թթ. նվիրատվությունները ըստ արժույթի							
Փոխարժեք 000	2017-2020	2021	2022	2023	2024	2025 ՍԳ	2025 համեմատ. 2024
ՀՀ դրամ	4,676,538	739,093	301,333	173,750	87,564	146,240	-29%
Դոլար	4,833	879	492	233	191	60	370%
Ռուբլի	115,069	6,517	455	1	2	-	N/A
Եվրո	798	122	34	20	31	20	-56%
2017-2025թթ. նվիրատվությունները ՀՀ դրամով							
	7,280,467	1,290,065	508,062	273,307	171,279	169,097	44%
Նվիրատվությունների քանակ	44,576	25,976	12,665	5,209	4,167	2 800	-6%
Նվիրատվությունների միջին չափը	163	50	40	52	41	60	53%

Նվիրատվությունները ըստ արժույթի			
Փոխարժեք 000	2024 ԵՌ 2	2025 ԵՌ 2	2025Թ. ԵՌ2 ՀԱՄԵՄԱՏ 2024Թ. ԵՌ2
ՀՀ դրամ	21,586	15,394	-29%
Դոլար	12	58	370%
Ռուբլի	-	-	N/A
Եվրո	3	1	-56%
Նվիրատվությունները ՀՀ դրամով			
	26,853	38,730	44%
Նվիրատվությունների քանակ	668	629	-6%
Նվիրատվությունների միջին չափը	40	62	53%

Գործընկերային կապերի հաստատում և ընդլայնում

ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է ամրապնդել իր գործընկերային կապերը հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների և բարեգործական հաստատությունների հետ՝ նպատակ ունենալով աջակցել զինծառայողներին և նրանց ընտանիքներին: Այս գործընկերությունները միտված են շահառուների սոցիալական, ֆիզիկական և հոգեբանական բարեկեցության ապահովմանը՝ համակարգային և շարունակական նախաձեռնությունների միջոցով:

Շահառուների անձնական զարգացմանն ու երկարաժամկետ բարեկեցությանը նպաստելու նպատակով ԶԻՆԱՊԱՀԸ իր գործընկեր կազմակերպությունների հետ նախաձեռնել է սոցիալական ինտեգրման և զարգացման մի շարք նախագծեր: Այդ սոցիալական ծրագրերի համար մշակվել է լիարժեք նախագիծ, իսկ 2025թ. համագործակցության հետագա հնարավորությունները պլանավորման փուլում են:

ԶԻՆԱՊԱՀԸ բազմաթիվ խորհրդակցական հանդիպումներ է կազմակերպել պետական մարմինների, ՀԿ-ների և գործընկեր հիմնադրամների հետ՝ միավորելու ջանքերը հետևյալ ուղղություններով՝

- **Կրթություն և հմտությունների զարգացում**
- **Տնտեսական ինտեգրում և զբաղվածություն**
- **Ձեռնարկատիրություն և բիզնեսի խթանում**
- **Համայնքային ընդգրկում և կայունության ձևավորում**

Հավատարիմ իր առաքելությանը՝ ԶԻՆԱՊԱՀԻ աջակցությամբ և միջնորդությամբ մի շարք համատեղ նախաձեռնություններ են սկիզբ առել և իրականացվել տարբեր կազմակերպությունների հետ գործընկերությամբ: Այս նախաձեռնությունները նպատակ ունեն տրամադրել թիրախավորված աջակցություն և համապատասխան տեղեկատվություն, ինչպես նաև խթանել շահառուների սոցիալական ինտեգրումը Հայաստանի ողջ տարածքում:

Երեխաների պաշտպանության միջազգային օր՝ Երևան Պարկում

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առիթով հունիսի 3-ին, 5-ին և 10-ին ԶԻՆԱՊԱՀԻ՝ զոհված և անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների 600 շահառու երեխաներ իրենց մայրիկների ուղեկցությամբ այցելեցին Երևան Պարկ:

Միջոցառման իրականացումը հնարավոր դարձավ Երևան Պարկի, «Ժառանգություն և առաջընթաց» ռուս-հայկական հումանիտար նախաձեռնությունների զարգացման և աջակցության հիմնադրամի ու ԶԻՆԱՊԱՀԻ ֆինանսավորմամբ և աջակցությամբ:

Մեկ լիարժեք և անմոռանալի օր՝ Երևան Պարկում. զվարճալի ատրակցիոններ, լույսեր, հիշողություններ...

Համագործակցություն «ՀԱՅՈՐԴԻ» բարեգործական հիմնադրամի հետ

«Հայորդի» աջակցության կենտրոնը մեկնարկել է նոր նախաձեռնություն՝ զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների 5-10 տարեկան երեխաներին աջակցելու նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրում ներգրավվել են 40 երեխա, որոնք մասնակցում են դասընթացների՝ ներառյալ կավի թերապիա, լող, ձիավարություն և ձեռագործ աշխատանքներ:

Մայիսյան տոներին ընդառաջ «ՀԱՅՈՐԴԻ» բարեգործական հիմնադրամն իրականացրեց թիրախավորված աջակցություն՝ ուղղված Սյունիքի մարզի Քաջարան և Կապան քաղաքներում բնակվող զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին, որոնք ունեն անչափահաս երեխաներ: Նախաձեռնության շրջանակում ԶԻՆԱՊԱՀԻ շահառու 21 ընտանիքներ հաջողությամբ ներգրավվեցին ծրագրում: Կարիքների գնահատման արդյունքում ընտանիքներին տրամադրվեցին առաջին անհրաժեշտության կենցաղային տեխնիկա, իսկ երեխաները ստացան կրթական խաղեր և խաղալիքներ:

ԶԻՆԱՊԱՀԸ փոխըմբռնման հուշագիր է ստորագրել «Ինոբիզ» ՀԿ-ի հետ

ԶԻՆԱՊԱՀԸ ստորագրել է փոխըմբռնման հուշագիր «Ինոբիզ» հասարակական կազմակերպության հետ՝ վերջինիս կողմից իրականացվող կրթական ծրագրերում և վերապատրաստման դասընթացներում իր շահառուների ներգրավելու նպատակով: Այս համագործակցությունը միտված է խթանելու զոհված և անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքների անդամների՝ մասնավորապես կանանց, մասնագիտական զարգացման հնարավորությունները՝ բիզնես կրթության և հմտությունների զարգացման միջոցով:

Տեղեկատվական արշավ «0-ից մինչև բիզնես» կրթական ծրագրի վերաբերյալ

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները՝ զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների կանայք, հնարավորություն են ստացել մասնակցելու «Ինոբիզ» ՀԿ-ի կողմից իրականացվող անվճար կրթական ծրագրին՝ «Բյուր. 0-ից մինչև բիզնեսի ստեղծում և կառավարում»: Ներկայումս ծրագրին մասնակցելու համար գրանցումները դեռևս շարունակվում են: 60 մասնակիցներ արդեն գրանցվել են:

Համագործակցություն Հայ Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) հետ «Նաիրի» ընտանեկան ճամբար՝ տեղահանված ընտանիքների համար

ՀԲԸՄ-ի՝ «Նաիրի» ընտանեկան ճամբարին ԶԻՆԱՊԱՀԻ նախաձեռնությամբ կազմակերպվեց ֆինանսական գրագիտության դասընթացը: Մասնակիցները ստացան անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ ֆինանսական գործառույթների արդյունավետ իրագործման համար: Նախաձեռնության նպատակն էր բարձրացնել մասնակիցների գիտելիքները և իրազեկվածությունը՝ անձնական ֆինանսների կառավարման և առկա տնտեսական ռեսուրսների հասանելիության ոլորտներում:

Շահառուների հետ հանդիպումներ

Հաշվետու ժամանակահատվածում Արգածոտնի, Լոռու և Տավուշի մարզերում կայացան ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների հետ հերթական երեք հանդիպումներ, որոնց մասնակցեցին շուրջ 100 շահառուներ: Հանդիպումների ընթացքում ներկայացվեցին ԶԻՆԱՊԱՀԻ գործառույթները, առաքելությունը, նորությունները և վերջին օրենսդրական փոփոխությունները, որոնք կատարվել են ի շահ ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների: Հանդիպումները նաև ծառայում են որպես երկկողմ հաղորդակցության կարևոր հարթակ՝ թույլ տալով շահառուներին արտահայտել իրենց մտահոգությունները և ստանալ ուղիղ պատասխաններ հարցուպատասխանի ընթացքում:

Հանդիպումների ընթացքում բարձրացված հարցերը վկայում են այն մասին, որ շահառուները դեռևս ունեն բազմաթիվ խնդիրներ, որոնք պահանջում են լրացուցիչ պարզաբանումներ և միջնորդություններ: Շարունակական հանդիպումները հնարավորություն են տալիս ոչ միայն պարզաբանելու առկա խնդիրները, այլև գործընկերների հետ համագործակցությամբ և համակարգմամբ նպաստել դրանց արդյունավետ լուծմանը:

Zinapah.am կայքում «Աջակցող ծրագրեր» ենթաբաժին

2025թ. ԶԻՆԱՊԱՀՆ է իր պաշտոնական կայքում ներկայացրել նոր ենթաբաժին՝ **«Աջակցող ծրագրեր»**: Այս հարթակում պարբերաբար թարմացվում է ԶԻՆԱՊԱՀԻ գործընկեր կազմակերպությունների կողմից իրականացվող նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները կարող են դիմել և մասնակցել այս ենթաբաժնում ներկայացված ծրագրերին ու նախաձեռնություններին, ինչը ստեղծում է նոր հնարավորություններ՝ աջակցություն ստանալու և զարգացման ուղիներ բացահայտելու համար:

Շահառուների հետ **մարզային հանդիպումների ժամանակ** ԶԻՆԱՊԱՀԸ **նաև ներկայացնում է տվյալ հարթակը՝ իրազեկելով շահառուներին իրենց հասանելի հնարավորությունների մասին:**

ZINHUB

ZINHUB հարթակի ինտեգրում պետական «e-work» համակարգի հետ

Այս ռազմավարական նախաձեռնությունը նպատակ ունի ընդլայնել ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների զբաղվածության հնարավորությունները և միաժամանակ բարելավել նրանց մասնագիտական առաջընթացի հետևման գործընթացը:

Ինտեգրման գործընթացը նախատեսվում է ավարտել 2025թ. ավարտին, և այն կբերի հետևյալ առավելությունների՝

- **ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների համար աշխատանքի որոնման և հնարավորությունների հասանելիության պարզեցում**
- **Աշխատանքի տեղավորման բարելավված վիճակագրություն և երկարաժամկետ հաջողության**
- **Պետական և հասարակական կառույցների հետ համագործակցության խորացում՝ կայուն կենսապահովման նպատակով**

Այս նախաձեռնությունը կարևոր առաջընթաց է՝ տեխնոլոգիաների միջոցով սոցիալական և տնտեսական ներառման խթանման ուղղությամբ:

ԶԻՆԱՊԱՀԻ զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2017թ. հիմնադրման ժամանակ ԶԻՆԱՊԱՀԸ կառավարվում էր Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից կամավորական սկզբունքով: 2021թ. սկսած ԶԻՆԱՊԱՀԸ տարանջատվել է ԿԲ-ից՝ դառնալով անկախ իրավաբանական անձ իր սեփական ենթակառուցվածքով:

ԹԻՄ

- Ղեկավար մարմին՝ Հոգաբարձուների խորհուրդը 5 անդամներով
- Գործառնական թիմ՝ 14 հոգուց բաղկացած անձնակազմ
- Կառուցվածքային փոփոխություն՝ կենտրոնանալով ԶԻՆԱՊԱՀԻ՝ որպես ֆինանսական կառույցի հիմնական իրավասությունների և սոցիալական ծրագրերի վրա
- Անձնակազմի կատարողականի և գնահատման թվային Teamflect համակարգի իրագործում

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԶԻՆԱՊԱՀԻ իրազեկվածության բարձրացման արշավի մեկնարկ
- ZINHUB միասնական հարթակի ինտեգրում e-work հարթակին
- 2024թ. աուդիտի հաշվետվության պատրաստում

ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- ՄՌ կառավարում
- EY՝ հաշվապահական ծառայությունների իրականացում
- Զանգերի կենտրոն
- SS անվտանգություն
- Իրավախորհրդատու

ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

- ԶԻՆԱՊԱՀԻ կայքի թողարկում. թերությունների շտկման փուլ
- Դրոշմանիշային վճարների վերադարձի գործընթացի ավտոմատացում և իրագործում
- Ֆինանսական ենթակառուցվածքի մշակում հատուցումների ծրագրի հենքով. վաղ փուլ՝ տեխնիկական առաջադրանքի մշակում

ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ զինհաշմանդամություն ունեցող շահառուների աջակցող միջոցների ծրագրի իրականացում. պլանավորման փուլ

ԶԻՆԱՊԱՀԻ 2024թ. աուդիտն իրականացրել է **«ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն**, իսկ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») համաձայն, որոնք հրապարակվել են Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի («ՄՀՍԽ») կողմից: Դրանք պատրաստվել են այն ենթադրությամբ, որ Հիմնադրամը գործում է շարունակական հիմունքներով: Ամբողջական զեկույցը կարող եք գտնել ԶԻՆԱՊԱՀԻ կայքում:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծնթ.	31.12.2024	31.12.2023
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		66,645	94,691
Ոչ նյութական ակտիվներ		50,869	14,885
Ներդրումային արժեթղթեր	4	10,500,290	2,573,923
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	38,495,371	27,378,861
		49,113,175	**30,062,360**
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ		19,988	28,617
Ներդրումային արժեթղթեր	4	848,631	42,579
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	61,228,055	44,710,738
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	6	1,881,288	5,519,741
		63,977,962	**50,301,675**
Ընդամենը ակտիվներ		**113,091,137**	**80,364,035**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	7	145,563,759	103,724,845
Վարձակալության գծով պարտավորություն		3,664	19,861
		145,567,423	**103,744,706**
Ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	7	17,944,955	13,101,671
Վարձակալության գծով պարտավորություն		21,774	23,561
Կրեդիտորական պարտքեր		27,375	14,948
		17,994,104	**13,140,180**
Զուտ ակտիվներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստ	8	112,168	(27,357)
Կուտակված վնաս		(50,582,558)	(36,493,494)
		(50,470,390)	**(36,520,851)**
Ընդամենը՝ պարտավորություններ և զուտ ակտիվներ		**113,091,137**	**80,364,035**

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծնթ.	2024թ.	2023թ.
Եկամուտներ			
Եկամուտ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից	9	45,650,543	43,709,476
Տոկոսային եկամուտ	10	9,338,679	5,952,073
Այլ եկամուտներ		518	697
		54,989,740	**49,662,246**
Ծախսեր			
Հատուցումների գծով ծախսեր	13	(20,541,220)	(3,436,956)
Հատուցումներ աշխատակիցներին		(162,068)	(132,110)
Մաշվածություն և ամորտիզացիա		(34,528)	(34,600)
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ծախս, զուտ	11	(583,819)	(228,394)
Ֆինանսական ծախս	12	(47,634,148)	(7,064,627)
Այլ ծախսեր		(122,781)	(94,772)
Փոխարժեքային տարբերություններից (վնաս)/օգուտ, զուտ		(240)	252
		(69,078,804)	**(10,991,207)**
Տարվա (վնաս)/շահույթ		**(14,089,064)**	**38,671,039**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ/(վնաս)		90,983	32,521
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություններ		48,542	(2,292)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական եկամուտ/(ծախս)		**139,525**	**30,229**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական (վնաս)/եկամուտ		**(13,949,539)**	**38,701,268**

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**(57,586)**	**(75,164,533)**	**(75,222,119)**
Տարվա շահույթ	-	38,671,039	38,671,039
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	30,229	-	30,229
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	30,229	38,671,039	38,701,268
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(27,357)**	**(36,493,494)**	**(36,520,851)**
Տարվա շահույթ	-	(14,089,064)	(14,089,064)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	139,525	-	139,525
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	139,525	(14,089,064)	(13,949,539)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**112,168**	**(50,582,558)**	**(50,470,390)**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված պարտադիր վճարներ և նվիրատվություններ	45,650,768	43,709,476
Տրված հատուցումներ	(21,489,420)	(14,746,687)
Աշխատանքի վճարմանն ուղղված ծախսեր	(117,697)	(99,729)
Այլ եկամուտներ	-	340,809
Այլ ծախսեր	(209,373)	(513,676)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**23,834,278**	**28,690,193**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(1,350)	-
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	(67,400,910)	(59,908,431)
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	(6,460,138)	(1,997,423)
Ներդրումներ ոչ պետական պարտքային արժեթղթերում	(2,009,968)	-
Բանկերում տեղաբաշխված միջոցների մարում	41,556,497	30,000,000
Մուտքեր պետական պարտքային արժեթղթերում կատարված ներդրումների մարումից	-	1,267,377
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ	6,393,137	4,944,405
Պարտքային արժեթղթերում ներդրումներից ստացված տոկոսներ	450,000	134,123
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(27,472,732)**	**(25,559,949)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(3,638,454)**	**3,130,244**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	5,519,741	2,389,638
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	1	(141)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	**1,881,288**	**5,519,741**

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել Հայաստանի և ամբողջ աշխարհի բոլոր անհատներին, կազմակերպություններին/համայնքներին, ովքեր կատարել են իրենց պարտադիր դրոշմանիշային վճարումները և անհատական նվիրատվությունները:

Ձեր աջակցության շնորհիվ ԶԻՆԱՊԱՀԸ կարողանում է իրականացնել իր առաքելությունը՝ հոգալ այն զինծառայողների և նրանց ընտանիքների կարիքները, ովքեր իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերել են հանուն Հայաստանի և նրա սահմանների անվտանգության:
ԶԻՆԱՊԱՀ

Միասին՝ զինվորիս կողքին...

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՑԵՔ ՄԵԶ

ՃԱՆԱՉԵՔ ՄԵԶ

Իմացեք ավելին ԶԻՆԱՊԱՀԻ մասին։
Այցելեք մեր կայքը, հետևեք մեզ սոցիալական հարթակներում։

ԱՋԱԿՑԵՔ ՄԵԶ

Կատարեք ձեր նվիրատվությունը և աջակցեք զինվորներին ու նրանց ընտանիքներին, ովքեր զոհաբերել են ամենակարևորը՝ իրենց կյանքն ու առողջությունը հանուն Հայրենիքի։

ՊԱՏՄԵՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Պատմեք մեր առաքելության և կատարած աշխատանքի մասին։

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

@zinapah

zinapah.am

info@zinapah.am

Վազգեն Սարգսյան փող. 26/1
Երևան, 0010, ՀՀ

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ